ՇԱՀԵՆ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

«ՀԱՅ ԵՐԻՏԱՍԱՐԴՆԵՐԻ ՄԻՈՒԹՅՈՒՆ» ԸՆԴՀԱՏԱԿՅԱ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆԸ (1978-1980 ԹԹ.)

DOI: 10.24234/journalforarmenianstudies.v3i66.125

ԱՄՓՈՓՈՒՄ

1960-ական թթ. ԽՍՀՄ մի շարք հանրապետություններում լայն թափ ստացած այլախոհության ընթացքում ձևավորվեցին մի շարք այլախոհական ընդհատակյա կազմակերպություններ, որոնք առավել կանոնակարգված և կազմակերպված դարձրին այլախոհական պայքարը: Բացառություն չէր նաև Խորհրդային Հայաստանը, որտեղ ակտիվորեն ընթանում էին այլախոհական շարժումներ, որոնք արտահայտում էին հայ հայրենասիրական շրջանակների ձգտումներն ու պահանջները՝ սկսած ազգային հարցերի բարձրաձայնումից, մարդու իրավունքների պաշտպանությունից մինչև Հայաստանի անկախության վերականգման համար պայքար:

Խորհրդային Հայաստանում հիմնադրված այլախոհական ընդհատակյա կազմակերպություններից իր ուրույն դերն ու նշանակություն է ունեցել 1978 թ. հիմնադրված «Հայ երիտասարդների միությունը» (այսուհետ՝ ՀԵՄ):

ՀԵՄ-ն ուներ ծրագիր, կանոնադրություն, երդման տեքստ: Կազմակերպության հիմնական նպատակն է եղել անջատել Խորհրդային Հայաստանը ԽՍՀՄ-ից, վերամիավորել Հայաստանից բռնազավթված և Թուրքիային փոխանցված հայկական տարածքները և վերականգնել Հայաստանի անկախությունը: Ըստ նախատեսված ծրագրի՝ Կոմունիստական կուսակցությունը պետք է երկրում հռչակվեր օրենքից դուրս:

Սույն հոդվածի նպատակն է ներկայացնել Հայաստանի անկախության վերականգման համար պայքար մղած այս կազմակերպության հիմնադրման ընթացքը, գաղափարախոսական հիմքերը և առաջնահերթությունները, նրա

անդամների ծավալած գործունեությունը և հետագա զարգացումները՝ Պետական անվտանգության կոմիտեի (այսուհետ՝ ՊԱԿ) կողմից բացահայտվելուց հետո:

Բանալի բառեր և արտահայտություններ. *Հայ երիտասարդների միություն, Ազգային միացյալ կուսակցություն, այլախոհություն, Հայաստանի անկախություն, «կոմունիստական բռնապետություն», «Երբ բոլշևիկները գլուխ բարձրացրին», «Ռուսները տիրեցին մեզ»*

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

1978 թվականին Խորհրդային Հայաստանում հիմնվում է ընդհատակյա կազմակերպություն, որը, ըստ էության, վերջին կանոնակարգված այլախոհական կառույցն էր Խորհրդային Հայաստանում: 1966թ. հիմնադրված Ազգային միացյալ կուսակցության (այսուհետ՝ ԱՄԿ) **(Հարությունյան Շ., 2024, «Գիտական Արցախ»)** հիմնադիրներից Շահեն Հարությունյանի եղբայրը՝ ԱՄԿ անդամ Մարզպետ Հարությունյանը, 1978 թվականին հիմնում է «Հայ երիտասարդների միություն» այլախոհական կազմակերպությունը **(Հարությունյան Շ., 2024, «Լրաբեր»)**: Այս կազմակերպությունն ուներ խիստ հակախորհրդային կեցվածք, որի գաղափարական առանցքում էր Հայաստանի անկախության վերականգման համար պայքարը: ՀԵՄ-ը, ըստ էության, գտնվում էր Խորհրդային Հայաստանի այլախոհության երեք հիմնական ուղղություններից մեկի՝ անկախության պայքարի գաղափարական դաշտում **(Հարությունյան Շ., 2024, «Գիտական տեղեկագիր»)**:

ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

Սույն հոդվածը շարադրվել է պատմական, պատմահամեմատական մեթոդների միջոցով: Իրականացվել է, պետական և անձնական արխիվային նյութերի, հարցազրույցների, հուշագրությունների կոնտենտ վերլուծություն:

ՔՆՆԱՐԿՈՒՄ

1978թ.հիմնադրված «Հայ երիտասարդների միության» անդամ Վարդան Հարությունյանը վերհիշում է ընդհատակյա կազմակերպության ստեղծման մասին՝ պատմելով. «ԱՄԿ հիմնադիրներից Շահեն Հարությունյանի եղբայրը՝

Մարզպետ Հարությունյանը, 1977-78թթ. Շահեն Հարությունյանի և Հայկազ Խաչատրյանի հերթական դատապարտումներից հետո ստեղծում է «Հայ երիտասարդների միություն» անվամբ ԱՄԿ երիտասարդական մասնաճյուղը: Մարզպետը պատմում էր, որ նման մասնաճյուղ ունենալու ծրագիրը եղել է 1975-76թթ., բայց տարբեր պատճառներով անընդհատ ձգձգվել էր: Ծրագրի հեղինակների կալանավորումը թելադրել էր Մարզպետին ի կատար ածել մասնաճյուղի հիմնումը» **(Հարությունյան Վ., 2022)** :

Մարզպետ Հարությունյանը, հիմնելով ՀԵՄ-ը, կազմակերպության ղեկավար է նշանակել Իշխան Մկրտչյանին, իսկ ինքը եղել է խորհրդատու և ընդհանուր ղեկավար **(ՀԱԱ, ֆ. 1191, ց. 20, գ. 23)**:

1979թ. մայիս-սեպտեմբեր ամիսների ընթացքում ՀԵՄ-ին են միանում Հովհաննես Աղաբաբյանը, Վարդան Հարությունյանը և Սամվել Եղիազարյանը: ՀԵՄ-ի ծրագիրը նախատեսում էր աստիճանաբար ընդլայնել կազմակերպությունը և նոր մարդկանց ներգրավվել շարժմանը: Այս նպատակի իրագործման համար կազմակերպության անդամներն իրականացնում են տարաբնույթ գաղափարական հանդիպումներ Խորհրդային Հայաստանի տարբեր շրջաններում: Թեև այդ ժամանակահատվածում տարբեր մարդիկ ուղղակիորեն կամ անուղղակիորեն համագործակցում են ՀԵՄ-ի կամ նրա անդամների հետ, այնուամենայնիվ կազմակերպության առանցքը կազմել են վերոնշյալ մարդիկ, որոնք հետագայում դատապարտվեցին ազատազրկման ծավալած գործունեության համար:

1979թ. Մարզպետ Հարությունյանը և Իշխան Մկրտչյանը, գրել և տարածել են «Ազգային ազատագրական և հայրենասիրական շարժման շարքերը» ու «Ազգային ազատագրական կազմակերպությունների անվտանգության կանոնները» խորագրերով հոդվածներ, որոնք ունեին հակախորհրդային բովանդակություն **(ՀԱԱ, ֆ. 1191, ց. 20, գ. 23)**: Այդ հոդվածներում հեղինակները պնդել են, որ ԽՍՀՄ-ում գոյություն ունեն ազգային ազատագրական շարժումներ: Քննադատելով Խորհրդային իշխանություններին՝ հոդվածներում նշում են.

«Խորհրդային պետությունը ղեկավարվում է հակամարդկային օրենքներով՝ վարելով դեսպոտիզմի և մտրակի քաղաքականություն»: Հոդվածների վերջում հայ ժողովրդին կոչ էր արվում դուրս գալ պայքարի հանուն ազատության և անկախության:

Իշխան Մկրտչյանը ձեռնամուխ է եղել տարաբնույթ հոդվածների տպագրմանն ու տարածմանը, որոնք արտացոլում էին ՀԵՄ-ի շուրջ հավաքված մարդկանց գաղափարական համոզմունքները: Ի. Մկրտչյանի նախաձեռնությամբ հայկական այլախոհական շրջանակներում լայնորեն տարածվել են «Մայրենի լեզու», «Խորթ անուններ», «Չսպիտացած վերք», «Ավ. Ահարոնյանի նամակները ուղղված Չիչերինին», «Ազգային իրավունք» և այլ հոդվածներ **(ՀԱԱ, ֆ. 1191, ց. 20, գ. 23)**: Սույն հոդվածների բովանդակությունը խիստ քննադատություններ և մեղադրանքներ էր ուղղում ԽՍՀՄ-ի դեմ, որտեղ մասնավորապես նշված էր, որ բոլշևիկները վաճառել են հայկական ազգային շահերը, օգնել են հայ ժողովրդի թշնամիներին և 1918 թվականից հանդիսացել են հայերի գերեզմանոցը:

1979-1980թթ. ընթացքում Վարդան Հարությունյանը կազմել և տարածել է մի շարք ազգային, հակախորհրդային և հայրենասիրական բովանդակություն ունեցող բանաստեղծություններ, ինչպիսիք էին «Հայ կոմունիստներին», «Իմ աստվածներին», «Հիշատակ», «Արդարություն ես երազում, ով մարդ», «Պատգամ իմ ընկերներին», «Ես նորից կգամ», «Մորթեցիք, մորթեցիք դուք», «Ես կգամ հեթանոս երգերով», «Հավատացեք իմ երդմանը, ընկերնե՛ր», «Եղել է եղեռն ու կռիվ» «Հաճախ է սիրտս գոռում ու գոչում», «Ինչու դու, հայ ժողովուրդ», «Ռուսները տիրեցին մեզ», «Ահա ովքեր են մեր եղբայրները» և այլն **(ՀԱԱ, ֆ. 1191, ց. 20, գ. 23)**: Վ. Հարությունյանը բոլոր այս գրվածքներում կոչ է անում դուրս գալ պայքարի Խորհրդային Միության դեմ, պայքարել Հայաստանի անկախության վերականգման համար: Բացի այդ, հեղինակը պնդում էր, որ հայ բոլշևիկները Հայաստանը վաճառել են թուրքերին, իսկ Սոցիալիստական համակարգում գործում էր կեղծ օրենքներ:

1979թ. Սամվել Եղիազարյանը պատրաստել է «Մարքսիզմ-Լենինիզմի տեսությունները և ընդհանուր նպատակները» վերնագրով հոդված **(ՀԱԱ, ֆ. 1191, ց. 20, գ. 23)**, որի բովանդակության մեջ, հեղինակը այս տեսությունը համարում է ուտոպիա, որը նպատակ ունի ստրկացնել փոքր ազգերին: Բացի այդ, խիստ քննադատաբար է ներկայացված Խորհրդային իրականությունը, իսկ ԽՍՀՄ-ը ներկայացված է որպես միջազգային դահիճ:

Նույն թվականի ընթացքում Հովհաննես Աղաբաբյանը պատրաստել է ազգային գաղափարախոսությամբ, հակախորհրդային մի շարք բանաստեղծություններ, ինչպիսիք են «Գորովակով երկիր հայոց», «Կռացել է հարվածների տակ», «Բազում սմբակների տակ», «Պատգամավոր դարձած» խորագրերով բանաստեղծությունները **(ՀԱԱ, ֆ. 1191, ց. 20, գ. 23)**: Վերոնշյալ աշխատանքներում հեղինակը ներկայացրել է իր դիրքորոշումներն առ այն, որ Խորհրդային Ռուսաստանը ստրկացրել է Հայաստանը և հարստահարում է այն: Հ. Աղաբաբյանը կոչ է արել հայ ժողովրդին պայքարել Հայաստանի անկախության վերականգման համար:

ՀԵՄ-ի անդամների մոտ եղած թռուցիկները, բանաստեղծությունները, հոդվածներն ու այլ արժեքավոր նյութեր լայնորեն տարածվել են հայկական այլախոհական միջավայրում և մասնավորապես, լայն տարածում են գտել անկախության պայքարն առաջնային համարող շրջանակներում:

1980թ. մայիս-հունիս ամիսներին ՊԱԿ-ը բացահայտում և կալանավորում է ՀԵՄ հինգ անդամներին՝ Մարզպետ Հարությունյանին, Իշխան Մկրտչյանին, Վարդան Հարությունյանին, Սամվել Եղիազարյանին, Հովհաննես Աղաբաբյանին **(Հարությունյան Շ., 2024, «Լրաբեր»)**:

ՀԵՄ անդամների նկատմամբ առաջադրվել է մեղադրանք ՀԽՍՀ քրեական օրենսգրքի 65-րդ հոդվածի 1-ին մասով (հակասովետական ագիտացիա և պրոպագանդա) և 67-րդ հոդվածով (առանձնապես վտանգավոր պետական հանցագործությունների կատարմանն ուղղված կազմակերպման գործունեությունը, ինչպես նաև հակասովետական կազմակերպությանը

մասնակցելը) (A Chronicle of Current Events): 1981թ. մայիսի 28-ին դատարանի կայացրած վճռով Մարզպետ Հարությունյանը և Իշխան Մկրտչյանը դատապարտվում են 7 տարի ազատազրկման և 5 տարի աքսորի, Վարդան Հարությունյանը՝ 5 տարի ազատազրկման և 3 տարի աքսորի, Սամվել Եղիազարյանը՝ 4 տարի ազատազրկման, Հովհաննես Աղաբաբյանը՝ 3 տարի ազատազրկման **(ՀԱԱ, ֆ. 1191, ց. 20, գ. 23)**:

Կալանավորումից հետո նույնպես, գրեթե բոլորը շարունակում էին հավատարիմ մնալ այն համոզմունքներին և գաղափարներին, ինչի համար ձերբակալվել էին: Այսպես. Մարզպետ Հարությունյանը կալանավորվելուց հետո քննչական մեկուսարանում պատրաստել է հակախորհրդային, ազգայնական բովանդակությամբ հոդված՝ «Երբ բոլշևիկները գլուխ բարձրացրին» վերնագրով **(ՀԱԱ, ֆ. 1191, ց. 20, գ. 23)**: Այս հոդվածում հեղինակը նշել է, որ բոլշևիկներն ամենասկզբից վաճառել են հայ ժողովրդի շահերը, ԽՍՀՄ-ում գոյություն ունի կոմունիստական բռնապետություն, չկա ազատություն, իսկ հայ ժողովուրդը ենթարկվում է հետապնդման: Իսկ Սամվել Եղիազարյանը կալանավորումից հետո քննչական մեկուսարանում պատրաստել է հակախորհրդային, հայրենասիրական հոդվածներ, որոնք ունեին հետևյալ վերնագրերը. «Ազգի ոգին մի անգամ», «Շիրազ ունենք բիբլիական», «15 թ. Մեծ եղեռն», «Հայոց քաջեր և դուք սիրով», «Մարտական է քարոզը Մուհամեդի», «Եթե դու հարուստ ես՝ քո լեզվով», «Եվ մեր հեթանոս նախնիները», «Սպիտակ լռություն» **(ՀԱԱ, ֆ. 1191, ց. 20, գ. 23)**: Այս հոդվածներում ներկայացված էին հեղինակի դիրքորոշումները Խորհրդային Միության մասին: Նշված էր, որ ԽՍՀՄ-ում բացակայել են ժողովրդավարություն, ազգերի ազատություն և հավասարություն: Հայ ժողովրդի շահերը ոտնահարվել են, ազգը զրկված է եղել ինքնուրույնությունից, դատապարտված է եղել տարրալուծման և օգտագործվել է ռուսների կողմից իրենց շահերի համար:

Վարդան Հարությունյանն իր հուշերում մանրամասն ներկայացրել է ՀԵՄ անդամների՝ կալանավայրում անցկացրած տարիները, որոնք եղել են փորձություններով և դժվարություններով լեցուն: Չնայած բանտային դժվար

կյանիքին և հալածանքներին՝ տեսնում ենք ՀԵՄ անդամների անզիջում նվիրվածությունը Հայաստանի անկախության պայքարին: Ինչպես հիշում է Վ. Հարությունյանը, բանտում գտնվելու ժամանակ որոշել են նշել Հայաստանի առաջին Հանրապետության հռչակման օրը՝ մայիսի 28-ը, որի ընթացքում վերահաստատել են պայքարի ճիշտ ճանապարհ ընտրելու մասին իրենց որոշումը, խոսել Հայաստանի անկախության անհրաժեշտության մասին **(Հարությունյան Վ., 2022)**:

ՀԵՄ-ի խիստ հակախորհրդային կեցվածքը և Հայաստանի անկախության պայքարի անմնացորդ նվիրվածությունը խստագույնս պատժվել է Խորհրդային իշխանությունների կողմից: ՀԵՄ անդամները դժվարին բանտային ճանապարհ են անցնում: Ռուս նշանավոր ակադեմիկոս, այլախոհ, իրավապաշտպան Յուրի Օռլովը, որը ՀԵՄ հիմնադիր-ղեկավար Մարզպետ Հարությունյանի հետ գտնվելով նույն կալանավայրում, նրան համարելով իր լավագույն ընկերը, իր հուշերն ամփոփող գրքում մանրամասն ներկայացրել է Մարզպետ Հարությունյանի դժվարին բանտային տարիները **(Orlov Y., 1991)**:

Մարզպետ Հարությունյանի նկատմամբ իրականացված դաժան վերաբերմունքի մասին է պատմում Վարդան Հարությունյանը. «Հատկապես դաժան են վարվում Մարզպետ Հարությունյանի հետ: Ջարդում են նրա կողոսկրերն ու վնասում կրծքավանդակն այնպես, որ Մ. Հարությունյանն առանց կողմնակի օգնության շարժվել կամ խորը շնչել չի կարողանում: Մեկը պետք է սեղմած պահեր կրծքավանդակը, որպեսզի նա կարողանար խորը շնչել կամ հազալ: Ջարդված կողոսկրերից մեկը վնասել էր թոքը, որի հետևանքները պարզվեց ազատ արձակվելուց հետո՝ 7 տարի անց: Էտապի ընթացքում Մ. Հարությունյանն այնքան ծանր վիճակում է եղել, որ քաղաքական կալանավորների համար նախատեսված կալանավայրերը հրաժարվել են ընդունել նրան, որպեսզի նրա շատ հավանական մահվան դեպքում պատասխանատվություն չկրեն» **(Հարությունյան Վ., 2014)**:

1981թ. ՀԵՄ անդամ և երակարատև ազատազրկման ու աքսորի դատապարտված Իշխան Մկրտչյանը Ռոստովի կալանավայրից փախուստի է դիմել: Ամիսներ անց հայտնաբերվել է ՊԱԿ աշխատակիցների կողմից և նրան կրկին տեղափոխել են Ռոստովի բանտ: Խորհրդային իշխանությունները դաժան հաշվեհարդար են տեսնում Ի. Մկրտչյանի նկատմամբ՝ դաժանագույն կտտանքների ու հալածանքների ենթարկելով նրան, որից հետո 24-ամյա երիտասարդի առողջությունը քայքայվում է: Այս կտտանքներից բացի, Ի. Մկրտչյանի պատժաչափին ավելացրին ևս 3 տարի ազատազրկում՝ ընդհանուր դարձնելով 10 տարի ազատազրկում և 5 տարի աքսոր: 1985թ. ապրիլի 24-ին՝ Եղեռնի զոհերի հիշատակի օրը, պատժիչ մեկուսարանի մենախցում 28 տարեկանում, անհասկանալի և մինչև օրս չպարզված հանգամանքներում մահացել է Իշխան Մկրտչյանը **(Հարությունյան Վ., 2014)**:

Հակախորհրդային անկախական գաղափարներին հավատարիմ մնալու տեսանկյունից կարևոր է ընդգծել ՀԵՄ ամենաերիտասարդ անդամի՝ Վարդան Հարությունյանի նամակը աքսորավայրից, որը հրապարակվել է 1987 թվականին: Աքսորավայրից գրված նամակում, որը կոչվում է «Ինչո՞ւ ես ներում չեմ գրում», Վարդան Հարությունյանը բացատրում է, թե ինչպես է ձեռք բերել հակախորհրդային գաղափարներ և ինչու է պայքարում անկախ Հայաստանի համար, և թե ինչու ներման խնդրանքով չի դիմում Խորհրդային իշխանություններին: Նամակի բովանդակությունն ըմբոստության հերթական դրսևորումն էր անկախության պայքարի համար բանտարկված Վարդան Հարությունյանի կողմից **(Гласность, 1987)**:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

«Հայ երիտասարդների միություն» ընդհատակյա կազմակերպությունը առանցքային նշանակություն է ունեցել Հայաստանի անկախության վերականգման համար պայքարում: Այս կազմակերպությունն ամբողջովին հարել է անկախության պայքարի այլախոհական ուղղությանը և եղել է, ըստ էության,

վերջին ձևավորված ընդհատակյա կազմակերպությունը Խորհրդային Հայաստանում:

ՀԵՄ-ն իր ազդեցիկ դերակատարումն է ունեցել Խորհրդային Հայաստանում ծավալվող այլախոհական շարժումների և այլախոհների գաղափարական մտածողության ձևավորման վրա: Հատկանշական կարևորություն ունի այն հանգամանքը, որ ՀԵՄ անդամները շարունակել են Հայաստանի անկախության վերականգման պայքարում անդրդվելի կեցվածք դրսևորել ՊԱԿ-ի կողմից կալանավորվելուց, այնուհետև բանտային դժվարին պայմաններում: Այս ամենի ցայտուն օրինակն է ՀԵՄ անդամների թե՛ կալանավորման սկզբնական ժամանակահատվածում գրված հոդվածները, արժանապատիվ կեցվածքը և թե՛ արդեն բանտային տարիների ընթացքում դրսևորած գաղափարական համոզմունքները: Այս համատեքստում կարևոր է ընդգծել, թե ինչպես են բանտային խիստ պահման վայրում գտնվելու պայմաններում անգամ ՀԵՄ անդամները նշել Հայաստանի անկախության հռչակման օրը՝ մայիսի 28-ը, վստահություն հայտնելով, որ իրենք կհասնեն իրենց նպատակին և կազատագերն Հայաստանը՝ վերականգնելով կորսված անկախությունը:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. **Հարությունյան Շ. (2024)**, Այլախոհության գաղափարական ուղղվածությունները Խորհրդային Հայաստանում 1960-80-ական թթ.-ին, «Գիտական տեղեկագիր», N 1 (46), Երևան, էջ 67-78:
2. **Հարությունյան Շ. (2024)**, Ազգային միացյալ կուսակցության հիմնադրումը և նրա դերն ու նշանակությունը Խորհրդային Հայաստանում 1960-80-ական թթ. ընթացող այլախոհական շարժման ընթացքում, «Գիտական Արցախ», № 1(20), Երևան, էջ 34-50:
3. **Հարությունյան Շ. (2024)**, Այլախոհական շարժումների ուժգնացման երկրորդ շրջանը Խորհրդային Հայաստանում (1968-1978թթ.), «Լրաբեր հասարակական գիտությունների» հանդես, N 1 (670), Երևան, էջ 95-105:

4. **Հարությունյան Վ. (2014)**, Այլախոհությունը Խորհրդային Հայաստանում, Երևան, «Վան Արյան» հրատ.:
5. **Հարությունյան Վ. (2022)**, Քաղբանտարկյալի պատմություն, Երևան, «Հայկական ուսումնասիրությունների Անի հիմնադրամ» հրատ.:
6. **Orlov Y. (1991)**, Dangerous Thoughts: Memoirs of a Russian Life, New York, William Morrow & Co.
7. Հայաստանի ազգային արխիվ, ֆ. 1191, g. 20, գ. 23:
8. A Chronicle of Current Events, The Trial of Marzpet Arutyunyan, Vartan Arutyunyan, Ishkan Mkrtchyan, Samvel Egiazaryan and Oganes Agababyan, 14 July 1981.
9. **Гласность (1987)**, выпуск II, Москва.

REFERENCES

1. **Harutyunyan Sh. (2024)**, Aylaxohowt'yan gaghap'arakan owghghvac'owt'ownnery' Xorhrdayin Hayastanowm 1960-80-akan t't'.-in /Ideological tendencies of dissent in Soviet Armenia in the 1960s and 1980s/, “Scientific bulletin”, №1(46), Yerevan, p. 67-78.
2. **Harutyunyan Sh. (2024)**, Azgayin miacyal kowsakcowt'yan himnadrowmy' & nra dern ow nshanakowt'yowny' Xorhrdayin Hayastanowm 1960-80-akan t't'. y'nt'acogh aylaxohakan sharjhman y'nt'acqowm /The establishment of the National United Party and its function and importance in Armenian society during the 1960s–1980s dissent movement/. “Scientific Artsakh”, №1(20), Yerevan, p. 34-50.
3. **Harutyunyan Sh. (2024)**. Aylaxohakan sharjhowmneri owjhgnacman erkrord shrjany' Xorhrdayin Hayastanowm (1968-1978t't'.) /The second round of the Soviet Armenian dissident movements' strengthening (1968-1978)/, Journal of Social Sciences "Lraber", №1 (670), Yerevan, p. 95-105.

4. **Harutyunyan V. (2014)**, Aylaxohowt'yowny' Xorhrdayin Hayastanowm /Dissent in Soviet Armenia/, Yerevan, “Van Aryan” publishing house.
5. **Harutyunyan V. (2022)**, Qaghbantarkyali patmowt'yown /Story of a political prisoner/, Yerevan, ““Ani” Foundation for Armenian Studies” publishing house.
6. **Orlov Y. (1991)**, Dangerous Thoughts: Memoirs of a Russian Life, New York, William Morrow & Co.
7. **Hayastani azgayin arxiv** /National Archives of Armenia/, (HAA), F.1191, c.20, g.23.
8. A Chronicle of Current Events, The Trial of Marzpet Arutyunyan, Vartan Arutyunyan, Ishkan Mkrtchyan, Samvel Egiazaryan and Oganes Agababyan, 14 July 1981.
9. **Glastnost (1987)**, Issue II, Moscow.

Шаген Арутюнян

"Союз армянской молодежи" подпольная организация(1978-1980)

Заключение

Ключевые слова и выражения: *Союз армянской молодежи, Национальной Объединенной Партии, Инакомыслие, Независимость Армении, «Коммунистическая диктатура», «Когда большевики подняли голову», «Русские правили нами».*

В 1960-х годах формирование нескольких диссидентских подпольных групп во время диссидентского движения, которое набирало обороты в нескольких странах СССР, помогло координировать и управлять диссидентской борьбой. То же самое было и в Советской Армении, где активная диссидентская деятельность формулировала цели и задачи армянских патриотических кругов. Они варьировались от защиты прав человека до продвижения национальных проблем и борьбы за независимость Армении.

Создание в 1978 году «Союза армянской молодежи» (далее именуемого САМ) было одной из диссидентских подпольных групп в Советской Армении с особой функцией и значением.

САМ имел формулировку присяги, устав и программу. Восстановление независимости Армении, воссоединение оккупированных армянских территорий, которые были отобраны у Армении и переданы Турции, и отделение Советской Армении от СССР были основными целями организации. План призывал страну объявить Коммунистическую партию незаконной.

Целью данной статьи является представление процесса создания организации, ее идеологической основы и приоритетов, а также деятельности ее членов и последующих событий после их раскрытия Комитетом государственной безопасности (далее — КГБ).

Shahen Harutyunyan

"Union of Armenian Youth" underground organization(1978-1980)

Conclusion

Key words and expressions: *Union of Armenian Youth, United National Party, Dissent, Independence of Armenia, "Communist Dictatorship", "When the Bolsheviks Raised Their Heads", "The Russians Ruled Us".*

In the 1960s, the formation of several dissident underground groups during the dissident movement that gained traction in several USSR countries helped to coordinate and govern the dissident fight. The same was true in Soviet Armenia, where active dissident activities articulated the goals and objectives of Armenian patriotic circles. These ranged from the defense of human rights to the promotion of national problems to the fight for Armenia's independence.

The 1978 establishment of the " Union of Armenian Youth" (henceforth referred to as the UAY) was one of the dissident underground groups in Soviet Armenia with a distinct function and importance.

The UAY had an oath wording, a charter, and a program. Restoring Armenia's independence, reunifying the occupied Armenian areas that had been taken from Armenia and given to Turkey, and separating Soviet Armenia from the USSR were the organization's primary objectives. The plan called on the country to declare the Communist Party illegal.

The aim of this article is to present the organization's founding process, ideological underpinnings, and priorities—as well as the activities of its members and subsequent developments following their disclosure by the State Security Committee (henceforth, KGB).

Շահեն Հարությունյան - Երևանի պետական համալսարանի Պատմության ֆակուլտետի Հայոց պատմության ամբիոնի հայցորդ, sh.harutyunyan.edu@gmail.com.

Шаген Арутюнян - Соискатель кафедры Истории факультета Истории Ереванского государственного университета, sh.harutyunyan.edu@gmail.com.

Shahen Harutyunyan- Yerevan State University Department of History Chair of the History Ph.D. student., sh.harutyunyan.edu@gmail.com.

Խմբագրություն է ուղարկվել 14.01.2025թ.

Հանձնարարվել է գրախոսության 23.01.2025թ.

Հրապարակման է ներկայացվել 21.03.2025թ.